


Արմենական-ՌԱԿ անցումային շղթան և դրա գաղափարական հետազիծը

Սարգսյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0005-6171-9021>

sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 327.5 (470+571, 477); EDN: HVRNMB;

DOI: 10.58587/18292437-2024.5-60

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Քաղաքականություն, կուսակցություն, անկախություն, ռամկավար, հայապահպանություն, ազգային վերելք, պատմության իմացություն և դասեր:

Цепочка перехода Арменакан-РАК и ее идеологическая траектория

Саргсян Сурен Т.

д. и. н., профессор, ведущий научный сотрудник Института истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. С момента обретения независимости и по сей день в сильно политизированной жизни Республики Армения партии играют решающую роль. В первые годы на этом поприще выделились армянские традиционные партии. Позже созданные партии характеризовались как правящие и оппозиционные, а также те, кто был между ними. Армянский народ по своей природе в значительной степени является последователем Либерально-демократической идеологии, пионером и факелоносцем которой была ЛДП. В этом смысле изучение ее истории имеет научно-практическое значение.

Особенно в наши дни, когда наша страна оказалась на перекрестке геополитических интересов и стало необходимым занять правильную позицию на международных площадках, более чем важно знать историю и извлекать из нее уроки. В этом плане знание истории локомотивных партий политической жизни становится своеобразным прожектором для правильной ориентации в создавшемся хаосе. История ЛДП – одна из наиболее важных.

Ключевые слова и словосочетания: политика, партия, независимость, лидер, национальный подъем, защита Армении, знание истории и уроки

The Armenian-RAK transition chain and its ideological trajectory

Sargsyan Suren T.

Doctor of Sciences in History, professor, Leading Researcher, NAS RA Institute of History (Yerevan, RA)

Abstract. From the moment of independence to the present day, parties have played a decisive role in the highly politicized life of the Republic of Armenia. And in the early years, Armenian traditional parties stood out in this field. Later, the established parties were characterized as ruling and oppositional, as well as those who swam between them. By their nature, the Armenian people are largely followers of the Liberal Democratic ideology, the pioneer and torchbearer of which was the LDP. In this sense, the study of its history is of scientific and practical importance.

Especially nowadays, when our country finds itself at the crossroads of geopolitical interests and it has become necessary to take the right position on international platforms, it is more than important to know history and learn from it. In this regard, knowledge of the history of the locomotive parties of political life becomes a kind of searchlight for proper orientation in the created chaos. The history of LDP is one of the most important.

Keywords & phrases: Politics, party, independence, leader, Armenian protection, national rise, knowledge of history and lessons

Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության (ԽՍԿԿ) 1956 թ. տեղի ունեցած XX համագումարից հետո Խորհրդային կայսրությունում սկսված «ձնհալը» նպաստեց և XX դարի 60-ական թվականներից Հայաստանի Խորհրդային սոցիալիստական հանրապետությունում (ՀԽՍՀ) սկսած օրրստօրե ծավալվող հայ ազատագրական շարժումը դրսևորվում էր հատկապես գաղափարախոսական ճակատում: Հայաստանի ու հայ ժողովրդի ապագայի մասին ծնվում էին նոր թեզեր և դրանց իրականացման համար նոր մոտեցումներ: Խիստ գաղտնի

պայմաններում կազմավորվում էին ազատագրական խմբակներ և նույնիսկ նոր կուսակցություններ (Ազգային միացյալ, Ինքնորոշում և այլն): Խորհրդային հատուկ ծառայություններն ակնդետ հետևում ու բոլոր հնարավոր միջոցներով ոչնչացնում էին այդ նորաստեղծ կառույցները: Այդ լարված ու աստիճանաբար ավելի քաղաքականացող մթնոլորտում Սփյուռքում ու Խորհրդային Հայաստանում աննախադեպ սկսեցին կարևորվել հայ ավանդական՝ Դաշնակցություն (ՀՅԴ), Հնչակյան (ՄԴՀԿ) և Ռամկավար Ազատական (ՌԱԿ) կուսակցությունները: Իսկ

անմիջապես անկախությանը նախորդող շրջանում կուսակցությունները դարձան ամբողջովին քաղաքականացած կյանքի հիմնական դերակատարները: Հասարակական կյանքի այդ կուսակցականացման գործընթացն այժմ էլ խիստ արդիական է և գտնվում է ամենաբարձր մակարդակի վրա: Այդ են վկայում 70-ից ավելի կուսակցությունների առկայությունը Հայաստանում: Բնականաբար դրանց ծագումնաբանությունը, գաղափարական արմատներն ու էությունը խորությամբ ուսումնասիրելն անհրաժեշտ է, խիստ կարևոր և արդիական:

Նախնադարյանից հետո բոլոր հասարակական-տնտեսական ֆորմացիաներում հասարակության տարբեր շերտերը անկախ ժամանակի ընթացքում կրած խորքային փոփոխություններից՝ կախված իշխանության մեջ ունեցած դիրքից, սոցիալական կարգավիճակից և դավանած գաղափարախոսություններով բաղկացած են եղել երեք հիմնական շերտերից՝

1. Իշխող՝ պահպանողական,
2. ընչագուրկ՝ հեղափոխական
3. դրանց արանքում լողացող միջին խավեր՝ ազատական ժողովրդավարներ:

Միևնույն ժամանակ մշտապես հասարակության մեջ եղել են և այժմ էլ գոյություն ունեն այդ երեք հիմնական շերտերի արանքում լողացող և իրենց բոլոր ենթաշերտերով հանդերձ միջանկյալ խավերը: Առավելագույն մեթոդային կուսակցաառատությունը, որը և հրապարակում եղած հիմնախնդիրները հասկանալու առումով անչափ կարևոր է նորովի և ավելի հիմնավոր ուսումնասիրել հայ իրականությունում գործած կուսակցությունների ամբողջական պատմությունը, նրանց դավանած արժեքները և գաղափարախոսությունները:

Հայ քաղաքական կուսակցությունների պատմությունը հիմնականում լավ է ուսումնասիրված: Սակայն դեռևս կան շերտեր, որոնք նորովի ու թարմ լուսաբանման կարիք ունեն: Այս առումով առանձնանում է հատկապես Ռամկավար Ազատական կուսակցության (ՌԱԿ) պատմությունը և, հատկապես, դրա Արմենականից-ՌԱԿ անցումային շրջանը:

Նախ նկատենք, որ ՌԱԿ-ի բաղկացնող բաղադրիչներն են 1885 թ. Վանում ստեղծված **Արմենական**, 1908 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում հիմնադրված **Հայ Սահմանադրական ռամկավար** (ՀՍՌԿ) կուսակցությունները և նրանց տարբեր ժամանակներում միախառնված **Վերակազմյալ Հնչակյան**, **Հայ Ժողովրդական** և այլ կուսակցություններ ու կազմակերպություններ:

Արմենականին չենք անդրադառնա, քանզի դրա պատմությունը կարծես լիովին լուսաբանված է [7; 8; 10; 11; 12; 13; 15 և այլն]: Միայն նկատենք, որ արմենականների ծրագիրն օրինա-

չափ հակադրեցություն էր անընդհատ խստացող թուրքական բռնատիրության: Այն նախնական էր ու պարզունակ, «գուրկ տեսաբանական խորքէ» և ամբողջովին իր ժամանակի ու միջավայրի, ասել է՝ արևմտահայ վայրագ իրականության ծնունդ և ժողովրդավարական, ազգային-ազատագրական բնույթ ուներ: Առաջնահերթ էր համարում սուլթանական բռնատիրությունից հայ ժողովրդի ազատագրումը [1; 2, էջ 5]:

XX դարի սկզբին կապիտալիստական զարգացման ուղի թևակոխած Ռուսական և Օսմանյան կայսրություններում բացարձակ միապետությունն այդ երկրների առաջադեմ ուժերի կողմից խոչնդոտ համարվեց հետագա առաջընթացի համար: Այդ հիմնախնդիրը լուծելու համար նրանք սկսեցին ձևավորվել բազմատեսակ խմբակներ: Դրանց հենքի վրա էլ ստեղծվեցին քաղաքական կուսակցություններ, որոնք սկսեցին կարևոր դերակատարություն ունենալ իրենց երկրների քաղաքական կյանքում: Սկսված վերածնունդ գործընթացում գլխավոր մեկնակետ դարձան լիբերալ դեմոկրատական (ազատական ժողովրդավարական) արժեհամակարգի հիմնադրույթները: Այդ գործընթացում ներառնվեց նաև Ռուսական և Օսմանյան կայսրությունների տիրապետության տիրույթում գտնվող հայ ժողովուրդը: Առաջնային դերակատարություն ստանձնեցին «Միություն և առաջադիմություն» և «Ազատություն և համաձայնություն» կուսակցությունները՝ Օսմանյան, իսկ Կադետներինը՝ Ռուսական կայսրությունում: Դրանք պայքար ծավալեցին սահմանադրական միապետություն հաստատելու համար:

Այդ երկրների տիրապետության ներքո գտնվող պետականությունից զրկված, սակայն այն վերականգնելու մշտական ձգտումով տոգորված հայ ժողովրդի մոտ ևս աստիճանաբար տիրապետող է դառնում ազատական-ժողովրդավարական գաղափարախոսությունը: Դրան նպաստում էր այն իրողությունը, որ այդ շրջանում մեծ թվով հայ երիտասարդներ ուսանել էին Եվրոպայի համալսարաններում և հայ հասարակությանը որոշակի կրթական առաջընթաց ապահովել: Միանգամայն բնական էր, որ այդ գաղափարական հենքով արևմտահայերը հիմնեցին Հայ Սահմանադրական ռամկավար, իսկ արևելահայերը՝ Հայ Ժողովրդական կուսակցությունները, որոնք այդ գաղափարախոսությունը ապագա անկախ պետականության համար պայքարում հիմնակետ և ուղենիշ դարձրին:

ՀՍՌԿ-ի պատմությունը ևս բավականին լավ է ուսումնասիրված¹, սակայն դեռևս կան չլուսաբանված շատ ծալքեր: 1908 թ. հոկտեմբերի 31-ին հիմնադրված կուսակցության պաշտո-

¹ Մանրամասն տե՛ս [13]:

նաթերթերն էին՝ 1912 թ. Վանում, ապա Թիֆլիսում լույս տեսած «Վան-Տոսպ» և 1919 թ. Երևանում՝ «Հայաստանի ձայնը» թերթերը²: Թեև նորաստեղծ կուսակցության հիմնադամները դարձան Արմենական կուսակցության շատ ներկայացուցիչներ, սակայն ՀՍՌԿ-ն հիմնականում հրաժարվեց արմենականության հեղափախականությունից և նրա հետապնդած քաղաքական նպատակներից: Մեծ ի մասամբ Միհրան Տամատյանի հեղինակած ՀՍՌԿ-ի ծրագրում հայտարարվեց, որ մերժելով որևէ անջատողական մտայնություն՝ իր նպատակն է Թուրքիայում «վերականգնված» Սահմանադրության էլ ավելի դեմոկրատացումը, երկրի ամբողջականության և անկախության պահպանման պայմաններում հայության ազգային ինքնության հետագա զարգացումը: Որ ՀՍՌԿ-ն հայկական ազգային կուսակցություն է և, անկախ կրոնական և դասակարգային պատկանելությունից, միավորում է ազգի բոլոր գիտակից և կենսունակ ուժերը: Հիմնական սկզբունքն էր՝ «աշխատանքի, դրամագլխի և տաղանդի կամավոր ընկերակցության» սկզբունքը: Ազգային հարցում հույսը դնելով օսմանյան սահմանադրության վրա՝ հրաժարվում էր անկախության գաղափարից և պատրաստ էր փոխզիջման գնալ երիտթուրքերի հետ³: Նկատենք, որ երիտթուրքերի կողմից օր-օրի խստացող հակահայ քաղաքականության արդյունքում կուսակցությունը ոչ միայն բավականին արագ ինքնահրաժարվեց սահմանադրական եզրից [6], այլև օրըստօրե ավելի հեղափոխականացավ:

ՀՍՌԿ-ի ծրագիրն առաջարկում էր բուրգի տեսքով սահմանադրական միապետություն. գազաթին «կայսրն էր օսմանցիներուն», ով պարտավոր էր հարգել սահմանադրությունը և օրենքները: Օրենսդրական իշխանությունը պետք է իրականացնեին կայսրն ու երկպալատ պառլամենտը՝ օրենսդրական նախաձեռնության իրավունք ընձեռելով նախարարների խորհրդին, իսկ գործադիր իշխանությունը՝ կայսրը նախարարների հետ միասին:

Օգտվելով սկսված աշխարհամարտի պատեհությունից թուրքերը կազմակերպեցին հայերի կործանարար ցեղասպանությունը, որին զոհ գնաց մեկուկես մարդ, իսկ հրաշքով փրկվածները սփռվեցին աշխարհով մեկ: Օտար ավերում իրենց գործունեությունը շարունակեցին նաև կուսակցությունները: Այն տարբերությամբ, որ արդեն գլխավոր խնդիրը դարձավ հայապահպանությունը: Աստիճանաբար հաղթահարելով մեծաքանակ դժվարություններ, ռամկավար տարբեր կառույցներ համախմբ-

վեցին և 1921 թ. Կ. Պոլսում հռչակեցին Ռամկավար Ազատական կուսակցությունը⁴: Կուսակցության կենսագիրներից Կ. Դալլաքյանը նշում է, որ այն ներկայացնում էր ազգայնական ճակատը [5, էջ 13], իսկ հիմնարար սկզբունքը՝ հայ ժողովրդի ֆիզիկական գոյապահպանությունը [5, էջ 40]: Ծրագրային փաստաթղթերում առանձին բաժիններով և մանրամասն ներկայացվեցին կուսակցության ընհանուր ուղղությունը, ՌԱԿ-ի գործակիցներին, օտար երկրներում իրենց պահվածքը, վերաբերմունքն ազգային ընդհանուր քաղաքականությանը և այլ հիմնարար հարցեր:

Հստակ էր, որ ՌԱԿ-ը թեև շարունակվեց ընկալվել որպես քաղաքական կազմակերպություն, սակայն ըստ էության այն այլևս քաղաքական գործառույթներ չէր իրականացնում⁵, այլ զբաղված էր հիմնականում հայապահպանության, հայահամախմբման և կրթամշակութային գործունեությամբ: Ավելի ուշ կուսակցությունն իր նպատակները Մեծ ներգաղթին և այլ հայրենասնպաստ գործառույթների: 1990-ականներին էլ Հայոց պետականության վերակերտման ընթացքում, ՌԱԿ-ը ոչ միայն առաջիններից մեկը բոլոր միջոցներով նպաստեց անկախության գործընթացին և անկախության փաստաթուղթն ստորագրող հինգ կուսակցություններից մեկը եղավ, այլև ՀՀ խորհրդարանում ՀՀԾ-ից հետո ունեցավ ամենամեծ պատգամավորական խմբակցությունը: Սակայն հետագայում օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ՌԱԿ-ը տրոհվեց տարբեր խմբերի: Այսօր էլ այն անհասկանալի օրակարգով ու խնդիրներով շարունակում է գոյատևել և ըստ էության ոչ քաղաքական, ոչ այլ բնույթի որևէ գործառույթի չի գրեթե մասնակցում:

Մի կողմ թողնելով Արմենական-ՌԱԿ շղթայի իրական և հիմնավոր լինելու մասին առարկությունները⁶, նշենք, որ Արմենական-ՀՍՌԿ և ՌԱԿ շղթայում գործել են տարաբնույթ խմբեր ու կառույցներ, որոնց տեսլականներն ի մի բերելով ուրվագծվում է բավականին մեծ կորերով հետագիծ, որն այսպիսի տեսք ունի՝

1. ազատագրական, հեղափոխական -

⁴ ՌԱԿ-ի կազմավորման մասին ստեղծվել է մեծաքանակ գրականություն: Հոդվածն ավելորդ չձանարեռնելու համար դրանք չենք թվարկում:

⁵ ՌԱԿ-ը Լիբանանի խորհրդարանում պարբերաբար ունենում էր պատգամավորներ, սակայն դա ոչ թե քաղաքական գործունեության արդյունք էր, այլև այդ երկրի համայնքային կառուցվածքով նախատեսված քվոտաների արդյունք:

⁶ Դա վիճարկում են գրեթե բոլոր դաշնակցական պատմաբանները՝ այն պատճառաբանությամբ, որ Վանի 1896 թ. հերոսական պաշտպանությանը հաջորդած շրջանում մեծ թվով արմենականներ անդամագրվեցին ՀՅԴ-ին: Դրանում ճշմարտության բաժին կա, սակայն բոլոր վավերագրերն ու հուշագիրները միաբերան վկայում են, որ, անկախ այդ գործընթացից, կուսակցության հիմնական կառույցները պահպանվեցին ու գործեցին ընդհուպ մինչև 1908 թ. և կարևոր մասը դարձան նորաստեղծ ՀՍՌԿ-ի:

² Այդ պարբերականների մասին մանրամասն տե՛ս [14]:

³ Տողերիս հեղինակին հաջողվեց ծանոթանալ ծրագրի լույս տեսած բոլոր տարբերակներին: [2; 3; 4 (մասնակի կրճատումներով մեջբերումներ): 9 (վերլուծությունների տեսքով): 16]:

- 2. սահմանադրական, միապետական -
- 3. խաղաղ, բարեփոխումներով պաշտամեն-տական:

Գաղտնիք չի, որ պատմագիտությունը քաղաքական գիտություն է: Հետևապես այսօրվա խիստ քաղաքականացված պայմաններում ճիշտ կողմնորոշվելու համար պատմաբաններս պետք է արմատապես իմանանք և հասարակությանը ճանաչելի դարձնենք հենց կուսակցությունների դավանած արժեքներն ու անցած ճանապարհի հետագիծը: Որպեսզի հասարակությունը կուրորեն ու չկողմնորոշված չցատկոտի կուսկցությունից-կուսակցություն, տուրք չտա ու չլծվի հայադեմ կառույցների քարոզչությանը: Այդ խորապատկերում չափազանց կարևոր է իմանալ նաև հայ ավանդական կուսակցությունների պատմությունը, քանի որ մեր օրերում հինգ հայից չորսն ապրում է օտար երկրներում՝ Մփյուռքում, իսկ Հայրենիք-Մփյուռք հարաբերությունները, մեղմ ասած, այնքան էլ բարվոք վիճակում չեն:

Այսօր մեզանում անկախ տարիքից, սեռից ու կրթությունից, բոլորն զբաղված են քաղաքագիտական վերլուծություններով: Դրանցում վկայակոչվում են նաև պատմական այս կամ այն իրադարձության մասին սխալ ու կամայական փաստեր, առաջ քաշում տարաբնույթ և իրականությունից հեռու տեսակետներ: Գաղտնիք չի, որ պատմագիտությունը քաղաքական գիտություն է: Հետևապես այն այսօր պետք է վերափոխի իր մոտեցումներն ու մեթոդները: Նախկին փաստակուտակումների և այս կամ այն արխիվից պեղված ու շատ հաճախ գրեթե ոչ մի նորություն չպարունակող վավերագրերի մեկտեղումների փոխարեն հասարակությանը մատուցի իրատեսական վերլուծություններ և պատճառաբանված եզրակացություններ: Հասարակությունն ու իշխանավորներն էլ իրենց պետք է ներդրություն տան, ընթերցեն դրանք և մերօրյա խառնաշփոթում հնարավորինս ճիշտ կողմնորոշվեն ու տեղին կիրառեն:

Եզրակացություններ

Աշխարհաքաղաքական ինտենսիվ զարգացումների կիզակետում գտնվող մեր տարածաշրջանում Հայոց պետականության համար անբարենպաստ իրավիճակ է ստեղծվել: Դա և երկրի ներքին կյանքում ամկա սոցիալ-տնտեսական ու այլ բնույթի դժվարությունները հուշում, թելադրում են այդ իրավիճակում ճիշտ կողմնորոշվել և անթերի կառավարել երկիրը:

Երկրի արտաքին ու ներքին բնագավառները կառավարող հիմնական դերակատարները կուսակցություններն են: Հետևապես դրանց պատմության ուսումնասիրությունը անհրաժեշտ ու պարտադիր է դառնում:

Անկախության առաջին օրերից հայ ավանդական կուսակցությունների օրինակը ուղենիշ

ու դարոց դարձավ հետագայում ստեղծված քաղաքական բոլոր կազմակերպությունների համար: Այսինքն, հանրապետության քաղաքական կյանքը մինչ օրս կրում է դրանց ազդեցությունը, ուստի նրանց պատմության ծալքերի լուսաբանումը ոչ միայն գիտական արժեք, այլև գործնական նշանակություն ունի:

Հայ ժողովուրդն իր բնույթով մեծ ի մասամբ ազատական-ժողովրդավար գաղափարախոսության կրող է ու հետևորդը: Գիտագործնական տեսակետից առավել քան կարևոր է դառնում հենց այդ գաղափարախոսության պիոներ և առաջամարտիկ ՌԱԿ-ի պատմության ուսումնասիրությունն ու լուսաբանումը:

Վկայակոչված աղբյուրներ և գրականություն

1. ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 1, թ. 7:
2. ՌԱԿ, հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վավերագրեր Վ. Ղազարեանի խմբագրությամբ: – Պէրոյթ, 1988:
3. Ծրագիր «Հայ Սահմանադրական Ռամկաւար կուսակցութիւն»: – Պօսթըն, 1909:
4. **Գարբինյան Ա.**, «Հայ ազատագրական շարժման օրէն»: - Փարիզ, 1947:
5. **Գալլաքյան Կ.**, Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն, 1921-1940: Գիրք առաջին: – Ե., 1999;
6. **Գալլաքյան Կ.**, Արմենականության և Սահմանադրականության հետ ՌԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ, հոդված Արմենական կուսակցության 110-ամյակին նվիրված հորեյանական գիտաժողովի թեզիսներում: – Ե., 1996:
7. **Եսփունճեան Ա.**, Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի կազմութեան: – Գահիրե, 1977:
8. **Համբարյան Ա.**, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908): – Ե., 1979:
9. **Համբարյան Ա.**, «Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության մասին»: – Ե., 1990:
10. Հայ ազգայի և Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1898-1914): – Ե., 1999:
11. **Ղազարեան Վ.**, Արմենական կուսակցութիւն: – Պէրոյթ, 1985:
12. **Ղազարեան Վ.**, Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի: – Պէրոյթ, 1978:
13. **Սարգսյան Ս.**, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.): – Ե., 2009:
14. **Սարգսյան Ս.**, Արևելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ.: – Ե., 2019:
15. **Ուզունեան Հ.**, Արեւմտեան ազգային պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ և ՌԱԿ-ը իր 60-ամեակին: – Լոս-Անջելոս, 1986:
16. «Բյուզանդիոն» թերթ, 1908 թ. հոկտեմբերի 6-11-ին լույս տեսած 3684, 3685, 3686 համարները:

Сдана/Հանձնվել է՝ 04.10.2024
 Рецензирована/Գրախոսվել է՝ 11.10.2024
 Принята/Ընդունվել է՝ 18.10.2024